ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

Հողային ֆոնդի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման ուղղությամբ կատարված աշխատանքներ.

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կանոնադրությամբ և մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության աշխատանքային ծրագրի հիման վրա հաշվետու ժամանակահատվածում, ըստ ժամանակացույցի, նախատեսված 41 համայնքներից 41 համայնքներում էլ իրականացվել են ստուգումներ և կազմվել են ուսումնասիրության ակտեր: ՀՀ Արագածոտնի մարզպետի մոտ կատարվել է ակտերի քննարկում, և համայնքների ղեկավարներին տրվել են համապատասխան ցուցումներ: ՀՀ Արագածոտնի մարզի Արուճ համայնքի ղեկավար Բագրատ Մարտիրոսյանի նկատմամբ նշանակվել է վարչական տույժ 150,000 դրամի չափով, որը վճարված է:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը ՀՀ հողային պետական տեսչության հետ, ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի պահանջներին համապատասխան իրականացրել է հողօգտագործման բնագավառում տեսչական ստուգումներ 11 համայնքներում: Ըստ ժամանակացույցի՝ 27.09.2017թ.-06.10.2017թ., իրականացվել են տեսչական ստուգումներ, կազմվել են համապատասխան ակտեր և տրվել են համապատասխան ցուցումներ՝ 1-ամսյա ժամկետում վերացնելու հայտնաբերված թերությունները: ՀՀ Արագածոտնի մարզպետի 2017 թվականի նոյեմբերի 1-ի որոշումներով Արագածավան, Օհանավան, Ուշի, Աղձք, Բազմաղբյուր, Հնաբերդ և Ծաղկաշեն համայնքների ղեկավարների նկատմամբ նշանակվել են վարչական տույժեր՝ ընդամենը 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով:

Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման, հետ վերցնելու օրինականության ապահովման մակարդակի բարձրացման ուղղությամբ կատարված աշխատանքներ.

ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության հողամասերից 2017 քվականին վարձակալությամբ տրամադրվել են 308.72 հա՝ 1,072,790 ՀՀ դրամ տարեկան վարձավճարով: ՀՀ Արագածոտնի մարզում ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվել է հյուսիս-հարավ միջպետական նշանակության ավտոմայրուղու հարող տարածքների հետ վերցման՝ գերակա շահի կիրառման, գործընթաց՝ ՀՀ Արագածոտնի մարզպետի աջակցությամբ:

Համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականության տարբեր կատեգորիաների հողամասերից հաշվետու ժամանակահատվածում վարձակալության է հանձնվել 13424 հա՝ 19,696,900 ՀՀ դրամ տարեկան վարձավճարով:

Հողամասերի օտարումից գոյացած միջոցների նպատակային օգտագործման ուղղությամբ կատարված աշխատանքներ.

Հողամասերի օտարումներից գոյացած միջոցները ներդրվում են համայնքների ֆոնդային բյուջե: Ծախսվում են համայնքների ղեկավարների պատվիրակված և պարտադիր լիազորությունների շրջանակներում: Հաշվետու ժամանակահատվածում գլխավոր հատակագծերի և գոտևորման սխեմաների պատվիրում տեղի չի ունեցել:

Քաղաքացիներին և իրավաբանական անձանց օտարվել են համայնքային սեփականության 640.04 հա հողամասեր, որի դիմաց համայնքների բյուջեներ մուտքագրվել է 336183430 ՀՀ դրամ, որը կազմում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 241.8 տոկոսը: Հարկ է նաև նշել, որ հողերի կատեգորիաների փոփոխության կադաստրային արժեքների տարբերությունը նույնպես մուտքագրվում է համայնքների ֆոնդային բյուջե և այդ գումարները նախատեսված են ուղղել համայնքների հողերի օգտագործման սխեմայի և գլխավոր հատակագծերի կազմմանը:

Գեոդեզիական և այլ հատուկ տեղեկատվական նշանների և կետերի պահպանման ուղղությամբ կատարված աշխատանքներ.

Մարզի վարչական սահմաններում սահմանանիշերի գեոդեզիական և այլ հատուկ տեղեկատվական նշանների և կետերի պահպանումը բաժնի ամենօրյա ուշադրության կենտրոնում է, և վնասված կետեր մարզի վարչական սահմաններում չունենք: Առկա կետերը գտնվում են գերազանց վիճակում:

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման ուղղությամբ կատարված աշխատանքներ.

ՀՀ Արագածոտնի մարզի վարչական սահմաններում հողերի օգտագործման 67 ժամանակավոր սխեմաներ են կազմվել՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և ՀՀ կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի դրույթների և ներկայացվել են միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը: 62 ժամանակավոր սխեմաներ ստացել են միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացություն, իսկ 5-ը գտնվում են քննարկման փուլում: Նպատակային նշանակության փոփոխությունների արդյունքում համայնքների բյուջե է մուտքագրվել կադաստրային արժեքների տարբերության 10,312,284 ՀՀ դրամ: Ապարան և Թալին քաղաքային համայնքների կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ուղարկվել գլխավոր հատակագծի փոփոխման 5 հողաշինարարական գործ, որոնք ստացել են դրական եզրակացություն:

Մարզի հողային հաշվեկշռի կազմում.

ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N656 որոշման պահանջների համաձայն ՀՀ Արագածոտնի մարզի հողային հաշվեկշիռը կազմվել և սահմանված ժամկետում

ներկայացվել է լիազոր մարմնի հաստատմանը: Մարզի հողային հաշվեկշիռը բերված է սույն հաշվետվության հավելվածում:

Ապօրինի հողօգտագործումների, ինքնակամ կառույցների առկայությունը, դրանք վերացնելու ուղղությամբ կատարված աշխատանքներ.

ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների վարչական սահմաններում ինքնակամ կառույցները և ապօրինի հողազավթումները կանխելու և դրանք բացառելու վերաբերյալ մարզխորհրդի նիստերի, ինչպես նաև մարզպետի՝ համայնքներ կատարած շրջայցերի ժամանակ համայնքի ղեկավարներին բազմիցս զգուշացվել է ամենօրյա հսկողություն իրականացնել:

2017 թվականի՝ ժամանակացույցով նախատեսված ստուգումների ընթացքում հայտնաբերվել են ապօրինի հողօգտագործման 4 դեպքեր (ՀՀ Արագածոտնի մարզի Ուշի, Հնաբերդ, Ծաղկաշեն և Արուճ համայնքներում), որոնք վերացված են, իսկ պատասխանատու անձինք ենթարկվել են վարչական պատասխանատվության:

2017 թվականի՝ ժամանակացույցով նախատեսված ստուգումների ընթացքում հայտնաբերվել են թվով 3 ինքնակամ կառույցներ՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ափնագյուղ, Վարդենուտ և Օրգով համայնքներում, որոնք միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված դրական եզրակացության հիման վրա համայնքների ղեկավարները ճանաչել են օրինական:

Պետական սեփականության պահպանության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ կատարված աշխատանքներ.

2017 թվականի ընթացքում պետական գրանցման է ներկայացվել համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 28 միավոր անշարժ գույք (օրվա կարգավորիչ ջրամաբարներ, ջրաղբյուրներ, պոմպակայաններ), որից Աշտարակ և Ապարան համայնքներում՝ 5-ական միավոր, Բազմաղբյուր համայնքում՝ 4 միավոր, Ճարճակիս համայնքում՝ 3 միավոր, Կարմրաշեն և Ղազարավան համայնքներում՝ 2-ական միավոր, Ուջան, Կարբի, Սուսեր, Դպրեվանք, Թալին, Օշական և Ագարակ համայնքներում՝ 1-ական միավոր:

ՀՀ Արագածոտնի մարզի Լեռնապար համայնքի վարչական տարածքում գտնվող «Լեռնապարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տարածքից ուսուցչի տունն առանձնացնելու պետական գրանցման աշխատանքների շրջանակներում ճշտված հատակագծերը հաստատվել են համապատասխան համայնքի ղեկավարի կողմից և փոստով առաքվել ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն:

Պետական գույքի, ինչպես նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվությունները ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից ներկայացվել են ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն:

ՀՀ Արագածոտնի մարզի համապատասխան բնակելի տարածքներում փաստացի բնակվող քաղաքացիների դիմումները (ընդամենը 11 միավոր), անձնագրերի պատճենները և բնակության

վայրի տեղեկանքները ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից ներկայացվել են ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն:

Հավելված

NN	Նպատակային նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Ընդամենը մարզի վարչական սահմաններում											
				սեփականության սուբյեկտ										
				ՀՀ քաղաքացիների	ՀՀ իրավաբանական անձանց	համայնքային				պետական				Օտարման կարիք չունեցող հողամասեր, կադաստրային գնահատման ենթակա հողեր
			Ընդամենը (2+3+4+8+12)			ընդամենը (5+6+7)	տրված անհատույց օգտագործման	տրված կարճաժամկետ	օտարման ենթակա հողամասերի և դրանց կառուցապատման	ընդամենը (9+10+11)	տրված անհատույց օգտագործման	տրված կարճաժամկետ	օտարման ենթակա հողամասերի և դրանց կառուցապատման	
	Ա	Բ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահողեր	54082.5	43138.8	221.5	10034.2		4304.9	5729.3	684.2		16.0	668.2	3.7
1.2		բազմամյա տնկարկներ, ընդամենը	4764.5	4353.3	231.4	166.6		118.9	47.8	13.2		5.9	7.3	
1.2.1		այդ թվում՝ պտղատու այգիներ	2954.3	2623.8	169.4	148.8		107.4	41.5	12.3		5.9	6.4	
1.2.2		խաղողի այգիներ	1810.3	1729.6	62.0	17.8		11.5	6.3	0.9			0.9	
1.2.3		այլ բազմամյա տնկ.												
1.3		խոտհարքներ	3691.2	2138.5	1.3	735.5		166.0	569.5	816.0		38.2	777.8	
1.4		արոտավայրեր	131231.8	4706.0	923.0	88915.7		5599.9	83315.8	36687.2		11180.9	25506.3	
1.5		այլ հողատեսքեր	24440.3	1129.4	30.6	12664.5	0.1	167.3	12497.2	10615.7		26.1	10589.6	
1		Ընդամենը	218210.3	55466.0	1407.8	112516.5	0.1	10357.0	102159.5	48816.2		11267.1	37549.1	3.7
2.1	2.Բնակավայրերի	բնակելի կառուցապատման	12485.6	12434.8	3.2	46.3	0.6	0.6	45.1	0.4			0.4	0.9
2.1.1		այդ թվում՝ տնամերձ հողեր	10732.9	10722.5	3.0	6.5	0.1		6.4					0.9
2.1.2		այգեգործ. (ամառան.)	1612.9	1612.9										
2.2		հասարակական կառուցապապ.	763.4	96.6	31.8	171.4	2.3	14.4	154.8	463.6	135.0	3.2	325.4	
2.3		խառը կառուցապատման	33.8	6.4		27.4	0.9	0.5	26.0					
2.4		ընդհանուր օգտագործման հողեր	1845.4	0.2		1844.1		2.1	1841.9	1.1			1.1	
2.5		այլ հողեր	2226.2	39.1	0.1	2182.4	3.1	2.7	2176.6	4.5			4.5	
2		Ընդամենը	17354.3	12577.1	35.1	4271.5	6.8	20.3	4244.4	469.7	135.0	3.2	331.5	0.9
3.1	3. Արդյունաբերության, ընդերքօգտ. և այլ նշանակության	արդյունաբերական օբյեկտներ	363.8	52.4	226.8	84.6		0.8	83.8					
3.2		գյուղ. արտադրական օբյեկտներ	1190.0	164.4	69.1	767.6	3.3	15.5	748.8	189.0			189.0	
3.3		պահեստարաններ	44.1	1.8		41.1			41.1	1.2	1.2			
3.4		ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասեր	841.1			5.4		1.8	3.6	835.7		431.8	403.9	

3		Ընդամենը	2439.0	218.6	295.8	898.7	3.3	18.1	877.3	1025.9	1.2	431.8	592.9	
4.1	4.Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածք. օբյեկտների	էներգետիկայի	50.5	2.6	10.3	35.9		9.9	26.0	1.6			1.6	
4.2		կապի	4.0	0.0	0.6	1.3			1.3	2.0			2.0	
4.3		տրանսպորտի	538.5		0.1	22.4			22.4	516.0	31.7		484.3	
4.4		կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	108.0	1.8		66.2	6.3	8.0	51.9	40.0	2.6	1.8	35.6	
4		Ընդամենը	701.0	4.4	11.1	125.9	6.3	17.9	101.7	559.6	34.3	1.8	523.6	
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպանական հողեր												
5.1.1		այդ թվում՝ արգելոցներ												
5.1.2		արգելավայրեր												
5.1.3		ազգային պարկեր												
5.2		առողջարարական նպատակներով նախատեսված հողեր	17.8			17.8			17.8					
5.3		հանգստի համար նախատեսված հողեր	49.6	2.9	3.5	12.2	0.1	0.1	12.1	31.0			31.0	
5.4		պատմական և մշակութային հողեր	2359.5		4.6	336.0			336.0	2018.8			2018.8	
5		Ընդամենը	2426.9	2.9	8.1	366.1	0.1	0.1	365.9	2049.8			2049.8	
6	6.Հատուկ նշանակ.	Ընդամենը	21411.5							21411.5	5080.1		16331.4	
7.1	7. Անտառային	անտառներ	8073.2							8073.2			8073.2	
7.2		թփուտներ	141.3							141.3			141.3	
7.3		վարելահողեր	100.0							100.0			100.0	
7.4		խոտհարքներ	131.2							131.2			131.2	
7.5		արոտներ	1874.1							1874.1			1874.1	
7.6		այլ հողեր	554.4							554.4			554.4	
7		Ընդամենը	10874.2							10874.2			10874.2	
8.1	8. Ջրային	գետեր	474.1							474.1		0.1	474.1	
8.2		ջրամբարներ	164.0			27.4			27.4	136.6	23.4		113.2	
8.3		լճեր	1055.4			215.9		0.2	215.7	839.6			839.6	
8.4		ջրանցքներ	470.6			216.7			216.7	253.9			253.9	
8.5		հիդրոտեխ. և ջրատնտ. այլ օբյեկտներ	50.6			30.2			30.2	20.4	0.1		20.3	
8		Ընդամենը	2214.8			490.3		0.2	490.1	1724.5	23.5	0.1	1701.0	
9.1	9. Պահուստային	աղուտներ												
9.2		ավազուտներ												
9.3		ճահիճներ												
9.4														
9.5		այլ անօգտագործելի հողեր												
9		Ընդամենը												
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ /1+2+3+4+5+6+7+8+9/			275632.1	68269.0	1757.9	118669.0	16.6	10413.5	108238.9	86931.6	5274.1	11703.9	69953.6	4.6